

Հունիսյան վարժություններ 1

Ա. Վարժություններ **հայիմ** չք (*հայեցայ, հայեաց* կամ *հայեա՛, հայեցեալ*)՝ նայել; ուշադրություն դարձնել, դիտել, գննել; ուշադիր լինել, զգուշանալ; հր՝տեսնել՝ բայով:

Նկատե՛ք, որ այս բայը հաճախ գործածվում է {ի / ընդ + հայցական} կառույցով՝ անուղղակի խնդիր տրականի (նախդրիվ տրական) իմաստով:

- 1. «Որովհետև Տիրոջ աչքերը նայում են *ի վերայ ամենայն երկրիս*»:
 - ▶ Չի
- 2. «*Չի զի՞նչ է* [հնդեվր. **mrto-*] *զի մեծացրիք [մեծանալ չք-ի պը] նրան, կամ որ նայես [I ապառնի + ընդ] նրան* [հնդեվր. **mēd-*]-ք-ով»:
 - ▶ Չի
- 3. «Հաստատված էր [կամ չք] [հնդեվր. **gobʰ-*]-ը [հնդեվր. **dyo(h₁)-dekm̥*] ցլերի [ու հոլ.] վրա. երեքը նայում էին *ընդ հիւսիսի, և երեքն ընդ արևմուտք, և երեքն ընդ հարաւ, և երեքն ընդ արևելք, և* [հնդեվր. **gobʰ-*]-ը՝ նրանց վրա»:
 - ▶ Յ
- 4. «Մի՛ նայիր [առանց *ի* նախդրի] չար կնոջը. որովհետև [զի] մեղր է կաթում [կաթեմ չք (կաթեցի)] պոռնիկ կնոջ շուրթերից [ան հոլ.], որ առ ժամանակ մի սնուցում է [պարարեմ նք] քո քիմքը, բայց հետո ավելի դառն է <լինում> [հնդեվր. **gid-* + -անեմ նք], քան [եղին. և սրեալ առաւել քան զսուր երկսայրի]»:
 - ▶ 2. Մի՛
- 5. «Մի՛ նայեք [առանց *ի* նախդրի] ինձ, որովհետև [զի] ես սևանալով թխացա»:
 - ▶ Մի՛
- 6. «Դու ես Աստուած, որ նայեցիր ինձ [+ ընդ]»:
 - ▶ Դու
- 7. «Քանզի մեղանչեցինք [մեղանչեմ, NB! *ե* խոնարհման չեզոք բայ է և -ւչ- սուկածանցով, անցյալ կատարյալն էլ +մեղեայ չի՛] մենք՝ և մեր թագավորները և իշխանները և քահանաները, և մեր հայրերը, և չարեցինք պատվիրանները [հնդեվր. **tyo-*] և չնայեցինք [առանց ընդ նախդրի] քո [իրանական **abi-daina-*]-ք-ներին և վկայություններին, որ դրեցիր *առ մեզ*»:
 - ▶ Քանզի
- 8. «Եվ կնայեմ [+ ընդ] ձեզ, և կաճեցնեմ [աճեմ չք-ի պը] ձեզ, և կբազմացնեմ [բազմանալ չք-ի պը] ձեզ, և կհաստատեմ [հաստատեմ նք] իմ ուխտը *ի ձեզ* [բոլոր բայերը՝ II ապառնի]»:
 - ▶ Եւ
- 9. «[հնդեվր. **h₂r-ti-*] եթե նայելով նայես [II ապառնի + ընդ] աղոթքին՝ *ծառայի քում*»:
 - ▶ X
- 10. «Նայիր [+ ընդ] երկնքին և տես՝ որչափ [հնդեվր. **bʰr̥ǵʰu-*] է քեզնից»:
 - ▶ Յ
- 11. Եւ ասէ Աստուած ցԱբրամ յետ մեկնելոյն «*Λώτ-ի՛*՝ նրանից. նայի՛ր քո աչքերով և տե՛ս այդ տեղից, որում» դու ես, ի կողմանէ Հիւսիսոյ եւ Հարաւոյ, յԱրեւելից եւ ի ծովու, զի զամենայն երկիրդ, «որ դու տեսնում ես, քեզ կտամ [II ապառնի] դա» եւ զաւակի քում մինչեւ յաւիտեան:
 - ▶ Եւ
- 12. «Եվ նայելով տեսավ Աստծո բանակը՝ բանակված»:
 - ▶ Եւ

Հրաչ Մարտիրոսյան

12.06.2021, Leiden

hrch.martirosyan@gmail.com